նշանացի կանչում էր ինձ: Ես հետևեցի նորան և մենք մտանք մի անբնակ խոռոչի մէջ: «Ի՞նչ կայ, Բրո», հարցուցի:

—«Այս քրդերի միտքը փոխվում է», պատասխանեց, «քո փայլուն զէնքերդ և փայլուն կոճակներդ սաստիկ հրապուրել են դրանց: Դոքա կարծում են, որ քո գրպաններդ լի են ոսկով, այսպիսի հրապուրանքը մեզ համար վատ վախճան կ' ունենայ», շարունակում էր Բրօն,—«ուրեմն քանի որ օր ունենք, պէտք է շտապենք այստեղից հեռանալու»:

«Միևնոյն չէ», պատասխանեցի ես, «այստեղ սպանողը դրսումն էլ կարող է սպանել, լաւ չէ, որ այս խոռոչում մենք մեզ պաշտպանենք»:

—«Այստեղ կարող են մեզ փակել և սովամահ անել, դուրսը մեր փախստեան ճանապարհը բաց է և ժայռերը կը պաշտպանեն մեզ», պատասխանեց Բրօն:

Բրօյի խորհրդածութիւնը շատ իրաւացի էր: Փոքր մտածելից զկնի սկսեցի առաջ գնալ, հրամայելով Բրօին որ ինձ հետևի:

Այրի դուռն ծեր պահապանի գլխին հաւաքվել էին երիտասարդ քրդերը, որոնք մեզ տեսնելուն պէս մի մի կողմ ծածկվեցան: Սա շատ վատ նշան էր:

Բրօն մի շարժում արեց փախչելու, ես պինդ կոխեցի նրա ոտքը, որ ցաւիցն հարայ տուեց, իսկոյն շուռ եկայ դէպի նա, իբր թէ ներողութիւն